

յիշեց շոտմայ քահանայապետը եւ յետոյ կաթողիկոսը, եւ կաթողիկէութիւն քարոզեց, երկու ամսոյ միջոցին քաղքին ժողովրդեան կէսէն աւելին իրեն յարեցաւ: Նոյն միջոցին Ախալցխայի փաշան փոխուեցաւ եւ տեղն եկող իսակ փաշա Կարնեցի Գրիգոր Եփրիկեանի որդի՝ Հաճի Աղապապա վաճառականէն 1600 քսակ դրամ փոխ առաւ: Աղապապա պոյման դրաւ, որ փաշան Սահակ երէցը բռնել տայ եւ Էջմիածին ղրկէ, զոր սիրով կատարեց: Սահակ շղթայակապ Էջմիածին հասաւ Սեպտ.ին մէջերը: Ղուկաս կաթողիկոս ատեան կազմեց, ուր Սահակ հաւատքին համար դատապարտուեցաւ բանտի: Քահանայական սքեմ՝ հագուցին, յետոյ թշնամանքներով հանեցին, մօրուքը անիւլեցին, գլուխը թրիք կապեցին, երեսը կարածիւթ քսեցին եւ իշու վրայ նստեցուցին եւ Վաղարշապատի գիւղին մէջ պտըտցուցին, մունետիկ կարգացընելով՝ թէ «Այսպէս պիտի ըլլայ ֆռանկացողին վիճակը»: Յետոյ բանտարկեցին, դուռը հիւսեցին եւ վերին ծակէն հաց եւ ջուր միայն կ'իջեցընէին: Այստեղ մնաց ձմեռն ու ամառը, հիւանդ եւ ծիւրած, մինչեւ որ 1792ին Ապրիլին՝ նախորդ Շէրիֆ Մահմուտ փաշա յաջորդեց եւ իր բարեկամին՝ Սահակ երիցու Էջմիածին բանտարկուիլը լսելով՝ Պաշ չուխատարը ղրկեց քանի մը հոգւով: Ասոնք Էջմիածին չհասած՝ կաթողիկոսը Սահակը բանտէն հանեց, քանի մ'անգամ գանակոծել եւ գլուխը գերծել տուաւ եւ տաճկական զգեստ